

շարեցին: 6 Իսկ նոքա ի ներքս ամրացեալք, յուսային ի տեղւոյն ամրութիւնս. եւ նոքա լակիշ ածեալ, նստէին արտաքուստ շուրջ զծորաւքն: 7 Եւ նստան շուրջ զբերդան ամիսք երեքտասան, եւ առնուլ զբերդն ոչ կարացին, զի կարի ամուր էր տեղին: 8 Աւերեցին քանդեցին զերկիրն ամենայն. ելանէին առնուին աւար զերկիրն ամենայն, շուրջ ի գաւառացն եւ յաշխարհացն ածէին զգերի մարդկանն եւ զանասնոյ ի լակիշն իւրեանց. այլուստ բերէին համբարս եւ ուտէին, եւ զբերդն պաշարեալ պահէին:

9 Իսկ Պապ որդին Արշակայ ոչ դիպեցաւ անդ ի Յայոց աշխարհին, զի առ թագաւորն Յունաց դիպեցաւ¹: 10 Չի թեպետ եւ զայս ամենայն լուան ազատագունդ բանակն Յայոց, չոգան իւրեանց ինդդել թիկունս աւզնակաւնութեան. եւ էր նոցա զաւրագլուխ Մուշեղ որդին Վասակայ սպարապետին: 11 Եւ չոգան նոքա առ իւրեանց արքայորդին. մինչ դեռ նոքա ընդ թագաւորին Յունաց խաւսէին, հաւանեցուցանէին զնոսա թիկունք լինել իւրեանց: 12 Իսկ յերկիրն Յայոց ստեպ առաքէին դեսպանս առ տիկին աշխարհին առ Փառանձեմ, զի ժուժկալ լինիցի բերդին, եւ մի՛ ձեռս տացէ ի Պարսիկս: 13 Եւ դեսպանս ստեպ ստեպ յորդոյ նորա ի Պապայ զմիմեանց զկնի ի շաբաթու շաբաթու եկեալ հասանէին. եւ գաղտ ընդ գաղտնի դուռն ուրեմն մեքենաւորութեամբ ի բերդն մտանէին, տային քաջալերս տիկնոջն. եւ յերկարեաց ի բերդին ամիսս երեքտասան պաշարումն: 14 Այլ որք գային եւ երթային, ստեպ ստեպ գային² թէ պինդ կաց, զի հասեալ է Պապ որդի թո եւ գունդ կայսերական ի թիկունս աւզնականութեան: 15 Եւ յերկարեաց խրախոյսն որ հասաներ, զի ասէին. Վայրիկ մի եւս, սակաւիկ մի եւս կալցիս ժոյժ, եւ ահա հասեալ է աւզնականութիւն:

16 Եւ եղել յետ չորեքտասաներորդ ամսեանն հարուածոց՝ որ յԱստուծոյ հասին ի վերայ գաղթականին բերդնորդեացն, զի մահ անկաւ ի վերայ նոցա՝ որք ի բերդին էին, զի ի Տեառնէ հասին պատուհասք: 17 Առաջի տիկնոջն Փառանձեմայ ուտէին եւ ըմպէին եւ ուրախ լինէին որք էին ի տաճարին³. յանկարծակի ի միում ժամու հարիւր այր, եւ ի միւսում երկերիւր, եւ էր՝ զի հինգ հարիւր այր մեռան ի բազմականին՝ յորժամ բազմեալ կային. եւ աւր ըստ աւրէ սատակէին: 18 Յորժամ սկսան, զամիս մի ոչ յերկարեաց՝ զի սատակեցան առ հասարակ. զի էին արք իբրեւ մետասան հազար, եւ կանայք իբրեւ վեց հազար. զի ամիս մի ոչ կացին. զի ամենեքեան՝ որ էին ի բերդին՝ առ հասարակ սատակեցան:

1 Օրինակ մի՛ կայր

2 Օրինակ մի՛ ասէին

3 Օրինակ մի՛ ի պալատին